

ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՐՈՒՆԵՐԸ

Նարեկ Անդրեասյան

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. ֆինանսական ռիսկեր, կառավարչական որոշումներ, կրկնակի գրանցում, հավանական կորուստներ

Ֆինանսական ռիսկերի կառավարչական համակարգում հաշվառման անհրաժեշտությունը բանկային համակարգում հնարավորություն է ընձեռնում օպերատիվ կարգով բացահայտելու կառավարման թիրախային նպատակադրումներից շեղումները՝ դրանով իսկ հնարավորություն ստեղծելով խուսափել ռազմավարական արդյունքների հասանելիությանը ուղղված "ուշացած որոշումներից": Այս առումով, նպատակահարմար է ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունքների հաշվառման տեղեկատվական հոսքերի համակարգումը իրականացնել կրկնակի գրանցման օգնությամբ, սակայն ցուցանիշների հաշվեկշռման այլ սկզբունքով: Նման պարագայում, հաշվառվող ցուցանիշները ներկայացվում են ոչ թե դրամական, այլ բալային չափիչներով: Բացի այդ, լրկալացված և անհատական հաշվեկշռված մոտեցում է ցուցաբերվում յուրաքանչյուր ցուցանիշին:¹

Բնականաբար, ֆինանսական ռիսկերի կառավարման տարբեր ոլորտներում ձևավորված արդյունքների փոխկապակցվածությունները հաշվեկշռվում են կրկնակի գրանցմամբ հաշվային թղթակցություններով, որոնց համար կիրառվում են կառավարչական հաշվառման համակարգում գործող հատուկ հաշիվներ, որոնք բնավ չեն թղթակցում ֆինանսական հաշվառման հաշիվների հետ: Այս նպատակով, առաջարկում ենք հաշվառվող յուրաքանչյուր ցուցանիշի գծով բացել հաշիվների խումբ՝ "կառավարչական աուդիտի արդյունքների առավելագույն բալեր = փաստացի ձեռքբերված բալեր +, - շեղում առավելագույնից" կտրվածքով:

Այսպես, օգտվելով աղյուսակ 1-ում ներկայացված տեղեկատվությունից և առաջարկվող նոր հաշիվներից, ներկայացնենք առևտրային բանկում ֆինանսական ռիսկերի կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման արդյունքների նախանշված առավելագույն մեծությունների և դրանցից առկա շեղումների հաշվառման կարգը՝ կազմելով

¹ Robert S. Kaplan and David P. Norton, The strategy focused organization How Balanced Scorecard companies thrive in the new business environment, Harvard Business School Press, Boston, 2001, pp.45-46

հետևյալ հաշվային թղթակցությունները, որոնք ինտեգրված չեն առևտրային բանկերում գործող ավանդական հաշվառման տեղեկատվական համակարգի հետ:

Աղյուսակ 1. Ֆինանսական ռիսկերի կառավարման աուդիտի նախատեսված արդյունքներից շեղումները²

Կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման արդյունքները	Արժեք		
	առավելագույն	շեղում	փաստացի
Ռիսկերի ախտորոշում			
Կառավարելի ռիսկերի բացահայտում	13	-2	11
Մասամբ կառավարելի ռիսկերի բացահայտում	5	-1	4
Անկառավարելի ռիսկերի բացահայտում	7	-4	3
	25	-7	18
Կառավարչական գործառույթներ			
Վնասների փոխհատուցման պահուստների ձևավորում	5	-1	4
Շեղումների վերլուծություն	12	-2	10
Կանխարգելիչ գործառույթներ	28	-7	21
	45	-10	35
Կառավարչական որոշումներ			
Որոշումների մոնիտորինգ	9	-3	6
Որոշումների արդյունավետության գնահատում	15	-8	7
Հաշվետվողականություն	6	-1	5
	30	-12	18
Ընդամենը	100	-29	71

1. ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկում կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման արդյունքների նախանշված առավելագույն մեծությունները

Դտ "Առավելագույն ցուցանիշ"

- ռիսկերի ախտորոշում.....25
- կառավարչական գործառույթներ.....45
- կառավարչական որոշումներ.....30

Կտ "Փաստացի ցուցանիշ"

- ռիսկերի ախտորոշում.....25

² Կազմվել է հեղինակի կողմից:

- կառավարչական գործառույթներ.....45
- կառավարչական որոշումներ.....30

2. ձևակերպվել են հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկում կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման փաստացի արդյունքները

Դտ "Փաստացի ցուցանիշ"

- ռիսկերի ախտորոշում.....15
- կառավարչական գործառույթներ.....35
- կառավարչական որոշումներ.....18

Կտ "Առավելագույն ցուցանիշ"

- ռիսկերի ախտորոշում.....15
- կառավարչական գործառույթներ.....35
- կառավարչական որոշումներ.....18

3. ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկում ֆինանսական ռիսկերի կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման փաստացի արդյունքների շեղումները սահմանված առավելագույն ցուցանիշից.

Դտ "Առավելագույն ցուցանիշ"

- ռիսկերի ախտորոշում.....(7)
- կառավարչական գործառույթներ.....(10)
- կառավարչական որոշումներ.....(12)

Կտ "Շեղում առավելագույն մեծությունից"

- ռիսկերի ախտորոշում.....(7)
- կառավարչական գործառույթներ.....(10)
- կառավարչական որոշումներ.....(12)

4. արձանագրված շեղումը վերագրվել է առևտրային բանկում ֆինանսական ռիսկերի կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման փաստացի արդյունքներին.

Դտ "Շեղում առավելագույն մեծությունից"

- ռիսկերի ախտորոշում.....(7)
- կառավարչական գործառույթներ.....(10)
- կառավարչական որոշումներ.....(12)

Կտ "Փաստացի ցուցանիշ"

- ռիսկերի ախտորոշում.....(7)
- կառավարչական գործառույթներ.....(10)
- կառավարչական որոշումներ.....(12)

Առաջարկվող հաշվային թղթակցությունների արդյունքները գրանցելով համապատասխան հաշիվներում պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջում դրանք փակվելով մնացորդ չեն ունենում: Կրկնակի գրանցման սկզբունքով և ենթախմբային հաշիվներով բանկային համակարգում ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման յուրաքանչյուր ցուցանիշի գծով արձանագրելով տեղեկատվություն "փաստացի ցուցանիշ = առավելագույն ցուցանիշ - շեղումներ" կտրվածքով, թույլ կտա ռիսկ մենեջմենթին վերլուծել ռիսկերի կառավարման միջավայրի փոփոխման գծով տեղեկատվությունը և գնահատել կառավարչական որոշումների արդյունավետությունը: Տիրապետելով կառավարչական հաշվառման կողմից ներկայացվող տեղեկատվությանը՝ ներբանկային ռիսկ մենեջմենթը հնարավորություն կունենա բանկային ռիսկային գործարքներից բխող հնարավոր վնասների ձևավորման կանխարգելիչ որոշումներ կայացնել՝ միտված դեպի տեսանելի ապագան:³

Աղյուսակ 2. Ֆինանսական ռիսկերի կառավարման աուդիտի արդյունքների տեղեկատվության հաշվեկշռված համակարգ⁴

Կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման առավելագույն բալերը	Արժեք	Փաստացի բալերն ու առավելագույնից շեղումները	Արժեք
Կառավարելի ռիսկերի բացահայտում	13	Կառավարչական աուդիտի փաստացի բալեր	71
Մասամբ կառավարելի ռիսկերի բացահայտում	5	ռիսկերի ախտորոշում	18
Անկառավարելի ռիսկերի բացահայտում	7	կառավարչական գործառույթներ	35
Վնասների փոխհատուցման պահուստների ձևավորում	5	կառավարչական որոշումներ	18
Շեղումների վերլուծություն	12	Առավելագույն բալերից շեղումներ	29
Կանխարգելիչ գործառույթներ	28	ռիսկերի ախտորոշում	7
Որոշումների մոնիտորինգ	9	կառավարչական գործառույթներ	10
Որոշումների արդյունավետության գնահատում	15	կառավարչական որոշումներ	12
Հաշվետվողականություն	6		
Ընդամենը	100	Ընդամենը	100

³ Бибнев М.Ф., Сбалансированная система финансовых показателей, Экономический анализ, теория и практика, #7, 2009, стр.38.

⁴ Կազմվել է հեղինակի կողմից:

Այսպես, ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման հաշիվների տեղեկատվությամբ մեր կողմից առաջարկվում է կազմել հաշվեկշռված համակարգ, որը խմբավորում է կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման առավելագույն բալերն ու դրանցից շեղումները (տես աղյուսակ 2): Տվյալ տեղեկատվական համակարգի ներկայացման անհրաժեշտությունը բանկային ռիսկերի գծով իրականացվող կառավարչական որոշումների շրջանակում պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Նախ, նման տեղեկատվությունը արտացոլում է ռիսկերի կառավարման միջավայրի դինամիկ փոփոխությունները: Ելնելով բանկային համակարգի գործունեության առանձնահատկություններից՝ առկա ֆինանսական ռիսկերը կարող են փոփոխության ենթարկվել թե՛ իրենց բնույթով, և թե՛ կառավարման մոտեցումներով: Հետևաբար, կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման առավելագույն բալերը կարող են փոփոխության ենթարկվել ի օգուտ այս կամ այն ոլորտային խմբի (ռիսկերի ախտորոշում, կառավարչական գործառույթներ, որոշումների կայացում), որոնք կներկայացվեն ֆինանսական ռիսկերի կառավարման աուդիտի արդյունքների տեղեկավորության հաշվեկշռված համակարգը բնութագրող աղյուսակի ձախ կողմում: Նման պարագայում կհեշտանա նաև առավելագույն բալերի կառուցվածքի արդեն իսկ փոփոխված բալերի համեմատումը բանկային գործունեությունում իրականացվող ֆինանսական ռիսկերի կառավարման փաստացի ձեռքբերումների հետ (տեղեկատվական հաշվեկշռված համակարգի աջ կողմ): Բացի այդ, ֆինանսական ռիսկերի կառավարման աուդիտի արդյունքների տեղեկատվության հաշվեկշռված համակարգը հնարավորություն կտա առևտրային բանկերում ըստ ուղղությունների համակարգելու կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման առավելագույն նպատակադրումներից փաստացի շեղումները և դրանով իսկ ոչ միայն բացահայտել ռիսկերի գծով որոշումների կայացման ”թույլ օղակները”, այլև դրանց պատասխանատուներին:

Եվ վերջապես, կրկնակի գրանցմամբ ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառումը հնարավորություն է ստեղծում հաշվեկշռային կապերով ներկայացնելու կառավարման գործառույթների փաստացի արդյունքներն ու նախանշված ցուցանիշներից շեղումները, որով գնահատվում է բանկային գործառույթների ռիսկերի ախտորոշման և կանխարգելման գործընթացի արդյունավետությունը:⁵ Այսպես, որքան բարձ-

⁵ G.J.M. Braam and E.J. Nijssen, Performance effects of using the Balanced Scorecard: a note on Dutch experience. *Long Range Planning*, 37(4), 2004 pp. 335-349

րանում է արձանագրված առավելագույն շեղումների տեսակարար կշիռը հաշվեկշռված հանրագումարային բալերում, այնքան ցածր է գնահատվում ֆինասական ռիսկերի ոլորտում կառավարչական որոշումների արդյունավետությունը: Յետևաբար, աղյուսակ 2-ի աջ կողմում ներկայացված խմբավորված շեղումները եթե ներկայացվեն ըստ կառավարչական աուդիտի գործիքակազմի կիրարկման առանձին տարրերի, ապա դրանցից յուրաքանչյուրի հարաբերությունը աղյուսակի հաշվեկշռված հանրագումարին ցույց կտա, թե հատկապես բանկային համակարգի որ գործառույթներն են (մոնիտորինգ, հաշվետվողականություն, շեղումների վերլուծություն) առավել անարդյունավետ կազմակերպվում ռիսկային ֆինանսական վնասների կանխարգելման գործընթացում:

Այսպես, կիրառելով ֆինանսական ռիսկերի կառավարման աուդիտի արդյունքների տեղեկավորության հավաշվեկշռված համակարգը և նրանում նախատեսված արդյունքներից շեղումների բացահայտումները (տես աղյուսակներ 1 և 2), պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկում ռիսկ մեջեջմենթի ,թույլե օղակ է հանդես եկել կառավարչական որոշումների արդյունավետության գնահատումը, որի գծով նախատեսված շեղումը առավելագույն բալերի կազմում կազմել է 8 %, այնուհետև կանխարգելիչ գործառույթների կիրառումը, որի գծով նախատեսված շեղումը առավելագույն բալերի կազմում կազմել է 7 %: Յետևաբար, ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում նաև ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման արդյունավետության վարկանիշային համակարգի ներդրումը ՀՀ առևտրային բանկերում, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի համեմատական վերլուծություններ կատարել և գնահատել ռիսկերի կառավարման առանձին գործիքների կիրառման լիարժեքությունը:

Նարեկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Բանկային ռիսկերի կառավարչական հաշվառման ներդրման ուղիները

Բանալի բառեր. ֆինանսական ռիսկեր, կառավարչական որոշումներ, կրկնակի գրանցում, հավանական կորուստներ

Ռիսկերի գծով կառավարչական որոշումների կայացումը առևտրային գաղտնիք է հանդիսանում և բանկային և հրապարակային ներկայացման ենթակա չէ: Սակայն, մյուս կողմից, այս ոլորտի տեղեկատվական ապահովագրությունը դեռևս թերի է, քանի որ ռիսկերի կառավարումը սպասարկող տեղեկատվական հոսքերը համակարգված և ընդգրկուն չեն: Այս հիմնախնդրի լուծման նպատակով հողվածում առաջարկվում է կրկնակի գրանցման հիմքով ռիսկերի կառավարման գործիքակազմի արդյունքների հաշվառում:

Нарек АНДРЕАСЯН

Пути внедрения управленческого учета банковских рисков

Ключевые слова: финансовые риски, управленческие решения, двойная запись, отчетность управленческого учета, вероятные потери

Управленческие решения по рискам являются коммерческой тайной в банковской системе и, как правило, не подлежат публичной огласке. Однако опыт показывает, что в коммерческих банках информационное обеспечение риск менеджмента до сих пор неполноценно, поскольку информационные потоки данной сферы до сих пор не систематизированы и не достаточно охватывают масштаб управленческой деятельности. С целью решения данной задачи в статье предлагается на основе двойной записи организовать управленческий учет результатов применения инструментов риск менеджмента в банковском секторе.

Narek ANDREASYAN

Implementation ways of management accounting banking risks

Key words: financial risk, decision making, double entry, the system of managerial accounting reporting, probable losses

Decision making on risk management is a commercial secrets in the banking system and, as a rule, isn't subject for public disclosure. However, experience shows that the commercial banks information support in risk management is still faulty, because the flow of information in this sphere is still not systematized and do not sufficiently cover the scale of risk management activity. In order to solve this problem, the article suggests, to organize managerial accounting results of the application of the tools of risk management in the banking sector, by using double-entry methodology.